ԲԼԻՑ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ. ԹԱՄԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

17.04.2023 18:23

Հարգելի ընթերցող, փաստաբանների շրջանում շարունակվում է բլից հարցազրույցների շարքը: Այս անգամ փորձել ենք բացահայտել Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի տեղակալ, փաստաբան ***Թամարա Բաղդասարյանին****:*

1. Մեկ նախադասությամբ բնութագրեք ինքներդ Ձեզ

Մի քիչ դժվար է, բայց երևի պատասխանատու, պարտաճանաչ և ինքս իմ հանդեպ խստապահանջ: Մի բան անելիս պետք է անեմ շատ լավ:

2. Ի՞նչ կփոխեիք Ձեր կյանքում

Կջնջեի պատերազմը

3. Կյանքը հրաշալի է, երբ ...

Հարազատներդ առողջ են ու դու լուրջ մտահոգվելու պատճառ չունես

4. Ո՞րն է եղել Ձեր կյանքի ամենասխալ որոշումը

Դժվարանում եմ պատասխանել : (*խորհեց երկար*)

5. Քչերը գիտեն, որ Դուք...

Այնքան էլ խիստ չեմ

6. Սովորություն, որից փորձում եք ձերբազատվել

Ամեն գնով ամեն ինչ հասցնելը

7. Հիմնականում ինչպե՞ս և քանի՞ օրում եք ժախսում Ձեր աշխատավարձը

Շատ արագ, առավելագույնը 5-10 օրում

8. Թամարա Բաղդասարյանը տարբերվու՞մ է տանը և աշխատանքում

Այո, տանը ես մայր եմ, տնային տնտեսուհի, աշխատավայրում՝ փաստաբան

9. Արդյո՞ք այսօրվա Թամարա Բաղդասարյանը լավ օրինակ կարող էր լինել 18 տարեկան Թամարա Բաղդասարյանի համար

Կարծում եմ՝ այո:

Ըստ իս, իմ նախագծած նպատակներին գրեթե հասել եմ

10. Ինչպե՞ս եք վարվում զայրույթի պահին

Անկեղծ ասած, հիմա փորձում եմ զայրույթս զսպել և պատճառներին մի փոքր ուշ անդրադառնալ, բայց դա փորձում եմ, իսկ հիմնականում զայրույթի պահին կարող եմ անցնել բարձր տոնների և փորձել ապացուցել իմ ճիշտ լինելը

11. Սու՞րճ, թե՞ թեյ

Դառը սև սուրճ

12. Նախընտրում եք ակտիվ, թե՞ պասիվ հանգիստ

Ակտիվ հանգիստ ծովում: Ինձ համար հանգիստը ասոցացվում է ջրի հետ

13. Եթե Ձեր մասին ֆիլմ նկարահանվեր, ինչպե՞ս կկոչվեր այն

Վերնագիրը կլիներ այսպես. «Կինն ամեն ինչ կարող է միաժամանակ հասցնել»

14. Ինչպե՞ս եք թոթափում հոգնածությունը երկար տևած դատական նիստից հետո

Եթե նիստի արդյունքն ինձ գոհացնում է չեմ հոգնում, հակառակ դեպքում ուղղակի մեկ բաժակ սուրճ է պետք

15. Ի՞նչն է փաստաբանին վստահելի դարձնում

Աշխատանքն ու ջանքերը, որը տեսնում է վստահորդը

16. Ընտրեցիք իրավաբանի մասնագիտությունը հենց փաստաբան լինելու համար, թե՞...

Չէ, իսկզբանե դատախազ դառնալու միտումով ընտրեցի, իսկ փաստաբան դառնալ ստիպեց ընկերուհիներիցս մեկը

17. Ինչպիսի՞ն պիտի լինի և չլինի փաստաբանը

Փաստաբանը չպետք է վերածվի վստահորդի կամակատարի և պետք է լինի իր գործին տիրապետող իրավաբան

18. Փաստաբանի լավագույն գովազդը...

Վստահորդների գոհունակությունն ու հօգուտ նրանց կայացված ակտերը

19. Ո՞րն է եղել Ձեր կողմից իրականացված ամենադժվար պաշտպանությունը, ի՞նչ հանցանքում էր կասկածվում Ձեր վստահորդը

Հոգեբանորեն ծանր դեպքեր շատ են եղել և լինում, բայց մի սպանության դեպք կար, ես սպանության մեջ կասկածվողի պաշտպանն էի և այնքան ազդված էի իրավիճակից, որ մինչ օրս զգացողություններս հիշում եմ:

20. Մեր բլից հարցերին պատասխանելու համար ու՞մ եք նետում մարտահրավերը

Փաստաբան Ռուզաննա Սիրեկանյանին

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ ՏՐԱՄԱԴՐԵՑ ԹԱՄԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })